

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ



ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

Մարզկենտրոնը՝ ք. Աշտարակ



Տարածքը	2753 քառ. կմ
Գյուղատնտեսական հողատեսքեր	136667 հա
այդ թվում՝ վարելահողեր	55771 հա
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	111
Գյուղական բնակավայրեր	117
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	138.8 հազ. մարդ
այդ թվում՝ քաղաքային	32.9 հազ. մարդ
գյուղական	105.9 հազ. մարդ

ՀՀ Արագածոտնի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 9.3%-ը: Մարզի բնակչությունը 2003թ. կազմել է հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 4.3%-ը: Ընդ որում, բնակչության 76.2%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում (գյուղական բնակչության ամենաբարձր տոկոսն է ՀՀ մարզերի կտրվածքով):

Մարզը իր անունը ժառանգել է պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից: Այն գտնվում է մայրաքաղաք Երևանի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթի՝ Արագածի միջև ընկած տարածքում (տարածքն արևմուտքում ձգվում է մինչև Թուրքիայի պետական սահմանը):

ՀՀ Արագածոտնի մարզը իր մեջ ընդգրկում է Աշտարակի, Ապարանի, Արագածի և Թալինի տարածաշրջանները: Մարզի քաղաքներն են՝ Աշտարակը, Ապարանը և Թալինը, ունի նաև 117 գյուղական բնակավայրեր:

Պատմամշակութային առումով մարզը յուրօրինակ թանգարան է, որտեղ գտնվում են Հայոց պատմության գրեթե բոլոր ժամանակաշրջաններին բնորոշ պատմական հուշարձաններ: Լավ պահպանված են կիլիկոսյան ամրոցները, Մ.Թ.Ա 3-1 հազարամյակի բնակատեղի Գեղարոտը, Հնաբերդ, Ծաղկահովիտ ուրարտական ամրոցները, Արշակունյաց թագավորների դամբարանները Աղծրում (4-րդ դար), Ագարակի, Ավանի, Քաղսիի, Փարպիի բազիլիկները (5-րդ դար), Օհանավանքը (5-8-րդ դարեր), Մ. Մաշտոցի դամբարանի վրա կառուցված եկեղեցին Օշականում (5-րդ դար), Շենիկի (5-7-րդ դարեր), Մաստարայի (6-րդ դար) Գառնահովիտի (6-7-րդ դարեր) ճարտարապետական կոթողները և այլն: Աշտարակում

են գտնվում 7-րդ դարի Ս. Կարմրավոր, 12-րդ դարի Ս. Մարինե, 13-րդ դարի Ս. Ծիրանավոր և այլ եկեղեցիներ: Առ այսօր լավ պահպանված է 17-րդ դարում կառուցված Աշտարակի կամուրջը, իսկ Աշտարակ քաղաքով այսօր էլ անարգել հոսում է ոռոգման միակ աղբյուր, շուրջ 3000 տարվա պատմություն ունեցող ուրարտական ժամանակաշրջանում զգված Մայր առուն:

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիներ՝ Երևան–Աշտարակ–Թալին–Գյումրի, Երևան–Աշտարակ–Սպիտակ և Երևան–Արմավիր–Քարակերտ–Գյումրի: ՀՀ Արագածոտնի մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով, ուստի մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում):

ՀՀ **Արագածոտնի մարզը** հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Ուշագրավ են հատկապես Ամբերդը, Թալինի մեծ և փոքր Կաթողիկե, Աշտարակի Ծիրանավոր, Սպիտակավոր, ս. Մարինե, ս. Սարգիս և Կարմրավոր, Փարպիի, Օշականի եկեղեցիներն ու վանքերը: Օշական գյուղում գտնվում է հայ գրերի ստեղծող սուրբ Մեսրոպ Մաշտոցի շիրիմը: Աղձք գյուղում է գտնվում Արշակունիների արքայատոհմի դամբարանը:

Մարզում են գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները:

ՀՀ **Արագածոտնի մարզի** արդյունաբերության տեսակարար կշիռը 2003թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 1.8%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 7.4%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 0.9% և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 1.0 %:

Մարզում զարգացած են արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և ըմպելիքի, թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

2003թ. մարզում գործել են 47 արդյունաբերական կազմակերպություններ, 4 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 8 շինարարական, 7 տրանսպորտային, 128 ծառայություններ մատուցող և 226 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 102-ը խանութներ են, 101-ը՝ կրպակներ, 16-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 4-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի և 3-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ: Մարզում գործել են նաև 1 ոչ պետական բարձրագույն, 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, 24 նախադպրոցական հիմնարկ, 127 հանրակրթական, 9 երաժշտական և արվեստի, 19 մարզական դպրոցներ, 110 գրադարան, 2 թանգարան, 5 գիտական հաստատություն, 3 հյուրանոց, 26 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 6 հիվանդանոց, մարզային նշանակության մշակութա-լուսավորչական 5 կենտրոններ և այլն: Բեռնաուղևորափոխադրումները հիմնականում իրականացվել են ավտոմոբիլային տրանսպորտով:

Աշտարակի տարածաշրջան

Վարելահողեր	8707 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	29
Գյուղական բնակավայրեր	33
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	66.1 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	20.7 հազ. մարդ
գյուղական	45.4 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 32 արդյունաբերական, 2 գյուղատնտեսական, 6 շինարարական, 2 տրանսպորտային, 74 ծառայություններ մատուցող և 137 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 49-ը խանութներ են, 68-ը՝ կրպակներ, 13-ը՝ հանրային սննդի օբյեկտներ, 3-ը՝ սպառողական ապրանքների և 2-ը՝ գյուղարտադրանքի շուկաներ: Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 39 հանրակրթական, 4 գեղարվեստի և 10 մարզական դպրոցներ, 20 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն, 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական և 5 գիտական հաստատություններ, 2 թանգարան, 27 գրադարան, 2 հյուրանոց, 13 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց:

Աշտարակ քաղաքը (մարզկենտրոնն է 1995թ.-ից) գտնվում է Քասախ գետի ափին, Երևանից 20 կմ հյուսիս-արևմուտք, հիմնադրվել է IX դարում: 2003թ.-ին քաղաքի բնակչության թվաքանակը կազմել է 21.5 հազ. մարդ: Քաղաքը հանդիսանում է Երևան - Գյումրի, Երևան – Սպիտակ ճանապարհների հանգույցը: Աշտարակ քաղաքը զարգացել է որպես Երևան քաղաքի արբանյակ քաղաք: Այն մարզի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կենտրոնն է:

2003թ. քաղաքում գործել են 20 արդյունաբերական, 5 շինարարական, 2 տրանսպորտային, 53 ծառայություններ մատուցող և 42 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 5-ը հանրային սննդի օբյեկտներ են, 3-ը՝ սպառողական ապրանքների և 2-ը գյուղարտադրանքի շուկաներ են:

2003թ. քաղաքում գործել են նաև 8 հանրակրթական, 4 գեղարվեստի և 10 մարզական դպրոցներ, 5 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն, 1 ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական և 5 գիտական հաստատություններ, 2 թանգարան, 2 գրադարան և 2 հյուրանոց:

Ապարանի տարածաշրջան

Վարելահողեր	9978 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	20
Գյուղական բնակավայրեր	20
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	22.0 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	6.6 հազ. մարդ
գյուղական	15.4 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 5 արդյունաբերական, 1 գյուղատնտեսական, 1 շինարարական, 2 տրանսպորտային, 15 ծառայություններ մատուցող, 54 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 24-ը խանութներ են, 20-ը՝ կրպակներ, 2-ը՝ հանրային սննդի օբյեկտ, 1-ը՝ գյուղատնտեսության շուկա:

Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 22 հանրակրթական, 2 արվեստի և 4 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 22 գրադարան, 5 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

Աղյաքան քաղաքը (6.6 հազ. բնակիչ) մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Քասախ գետի ափին (Երևանից 59 կմ հեռավորությամբ): 2003թ. քաղաքում գործել են 3 արդյունաբերական, 1 շինարարական, 1 տրանսպորտային, 10 ծառայություններ մատուցող և 20 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ և 1-ը՝ գյուղատնտեսության շուկա:

Քաղաքում 2003թ. գործել են նաև 3 հանրակրթական, 2 արվեստի և 2 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ և 2 գրադարան:

Թալինի տարածաշրջան

Վարելահողեր	24168 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	40
Գյուղական բնակավայրեր	41
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	36.5 հազ. մարդ
քաղաքային	5.6 հազ. մարդ
գյուղական	30.9 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 8 արդյունաբերական, 1 գյուղատնտեսական, 1 շինարարական, 1 տրանսպորտային, 28 ծառայություններ մատուցող, 24 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 18-ը խանութներ են, 4-ը՝ կրպակներ, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա: Տարածաշրջանում գործել են նաև 44 հանրակրթական, 3 գեղարվեստի և 3 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 40 գրադարան, 1 հյուրանոց, 6 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հիվանդանոց:

Թալին քաղաքը (5.6 հազ. բնակիչ) գտնվում է Արագած լեռան հարավ - արևմտյան լանջին: Քաղաքի շրջակայքում հայտնաբերվել են հնագույն բնակավայրերի հետքեր (մ.թ.ա. II հազարամյակ):

2003թ. քաղաքում գործել են 2 արդյունաբերական, 1 շինարարական, 1 տրանսպորտային, 22 ծառայություններ մատուցող և 13 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը հանրային սննդի օբյեկտ է և 1-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի շուկա: Քաղաքում 2003թ. գործել են նաև 3 հանրակրթական, 3 գեղարվեստի և 2 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 հյուրանոց և 2 գրադարան:

Արագածի տարածաշրջան

Վարելահողեր	12918 հա
Քաղաքային համայնքներ	-
Գյուղական համայնքներ	22
Գյուղական բնակավայրեր	22
Բնակչության թվաքանակը 2004թ. հունվարի 1-ի դրությամբ	14.2 հազ. մարդ
այդ թվում՝ գյուղական	14.2 հազ. մարդ

Տարածաշրջանում 2003թ. գործել են 2 արդյունաբերական, 2 տրանսպորտային, 11 ծառայություններ մատուցող և 11 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ: Տարածաշրջանում 2003թ. գործել են նաև 22 հանրակրթական ու 2 մարզական դպրոցներ, 21 գրադարան, 2 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Աշտարակ	ք. Աշտարակ
	գ. Մուղնի
Ապարան	ք. Ապարան
Թալին	ք. Թալին

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ագարակ (Աշտարակի տարածաշրջան)	Ագարակ
Ագարակ (Թալինի տարածաշրջան)	Ագարակ
Ալազյազ	Ալազյազ
Ակունք	Ակունք
Աղձք	Աղձք
Ամրե թագա	Ամրե թագա
Անտառուտ	Անտառուտ
Աշնակ	Աշնակ
Ավան	Ավան
	Խնուսիկ
Ավթոնա	Ավթոնա
Ավշեն	Ավշեն
Արագած (Ապարանի տարածաշրջան)	Արագած
Արագած (Թալինի տարածաշրջան)	Արագած
Արագածոտն	Արագածոտն
Արայի	Արայի
Արեգ	Արեգ
Արտաշավան	Արտաշավան
	Լուսաղբյուր
	Նիգատուն
Արտենի	Արտենի
Արուն	Արուն
Ափնագյուղ	Ափնագյուղ
Բազմաղբյուր	Բազմաղբյուր

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Բայսզ	Բայսզ
Բառոժ	Բառոժ
Բերքառատ	Բերքառատ
Բյուրական	Բյուրական
Գառնհովիտ	Գառնհովիտ
Գեղաղիբ	Գեղաղիբ
Գեղաձոր	Գեղաձոր
Գեղարոտ	Գեղարոտ
Գետափ	Գետափ
Գյալթո	Գյալթո
Դաշտաղեն	Դաշտաղեն
Դավթաշեն	Դավթաշեն
Դերեկ	Դերեկ
Դիան	Դիան
Դպրեվանք	Դպրեվանք
Եղիպատրուշ	Եղիպատրուշ
Եղնիկ	Եղնիկ
Երնջատափ	Երնջատափ
Ջարինջա	Ջարինջա
Չովասար	Չովասար
Թթուջուր	Թթուջուր
Թլիկ	Թլիկ
Իրինդ	Իրինդ
Լեռնապար	Լեռնապար
Լեռնարոտ	Լեռնարոտ
Լուսագյուղ	Լուսագյուղ
Լուսակն	Լուսակն
Ծաղկահովիտ	Ծաղկահովիտ
Ծաղկաշեն	Ծաղկաշեն
Ծաղկասար	Ծաղկասար
Ծիլքար	Ծիլքար
Կաթնաղբյուր	Կաթնաղբյուր
Կարբի	Կարբի
Կարմրաշեն	Կարմրաշեն
Կաքավաձոր	Կաքավաձոր
Կոշ	Կոշ
Հակկո	Հակկո
Հարթավան	Հարթավան
Հացաշեն	Հացաշեն
Հնաբերդ	Հնաբերդ
Ձորագլուխ	Ձորագլուխ
Ղաբաղթափա	Ղաբաղթափա
Ղազարավան	Ղազարավան
Մաստարա	Մաստարա
	Ձորագյուղ
Մելիքգյուղ	Մելիքգյուղ
Միրաք	Միրաք
Մուլքի	Մուլքի
Ներքին Բազմաբերդ	Ներքին Բազմաբերդ
Ներքին Սասունաշեն	Ներքին Սասունաշեն

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Նիգավան	Նիգավան
Նոր Ամանոս	Նոր Ամանոս
Նորաշեն (Այարանի տարածաշրջան)	Նորաշեն
Նորաշեն (Արագածի տարածաշրջան)	Նորաշեն
Նոր Արթիկ	Նոր Արթիկ
Նոր Եղեսիա	Նոր Եղեսիա
Շամիրամ	Շամիրամ
Շենավան	Շենավան
Շենկանի	Շենկանի
Շղարշիկ	Շղարշիկ
Ոսկեթաս	Ոսկեթաս
Ոսկեհատ	Ոսկեհատ
Ոսկեվազ	Ոսկեվազ
Չքնաղ	Չքնաղ
Պարտիզակ	Պարտիզակ
Ջամշլու	Ջամշլու
Ջրամբար	Ջրամբար
Ռ-յա Թազա	Ռ-յա Թազա
Սաղմոսավան	Սաղմոսավան
Սանգյառ	Սանգյառ
Սասունիկ	Սասունիկ
	Կարին
Սարալանջ	Սարալանջ
Սիփան	Սիփան
Սորիկ	Սորիկ
Սուսեր	Սուսեր
Վարդաբլուր	Վարդաբլուր
Վարդենիս	Վարդենիս
Վարդենուտ	Վարդենուտ
Վերին Բազմաբերդ	Վերին Բազմաբերդ
Վերին Սասունաշեն	Վերին Սասունաշեն
Վերին Սասունիկ	Վերին Սասունիկ
Տեղեր	Տեղեր
Յամաքասար	Յամաքասար
Ուշի	Ուշի
Ուջան	Ուջան
Փարպի	Փարպի
Քուչակ	Քուչակ
Օհանավան	Օհանավան
Օշական	Օշական
Օրգով	Օրգով
Օրթանյա	Օրթանյա

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁԻ 10 000 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ, 2003Թ.**

	Ընդամենը	նրանցից	
		կանայք	տղամարդիկ
Բնակչությունը, մարդ	10 000	5101	4899
Ծնվածներ	121	62	59
Մահացածներ	81	41	40
Ամուսնություններ	46	X	X
Ամուսնալուծություններ	2	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	28.3	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	64	33	31
հանրակրթական	1938	989	949
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	76	39	37
միջին մասնագիտական	1	1	0
բարձրագույն մասնագիտական	2	1	1
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	17
Մարզիկներ, մարդ	134	68	66
Չբաղվածներ, մարդ	4726
նրանցից՝ գիտական հիմնարկներում	34	17	17
նրանցից՝ գիտության դոկտոր	3	2	1
գիտության թեկնածուներ	7	4	3
ուսուցիչներ	223	114	109
բժիշկներ	16
կրտսեր բուժանձնակազմ	52
Գործազուրկներ (պաշտոնապես գրանցված), մարդ	106	54	52
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1678
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	478	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	22543
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	353
Իրավական ոլորտ			
հայտնաբերված վարչական իրավախախտումների քանակը տարվա ընթացքում	155	X	X
անձանց թվաքանակը, որոնց նկատմամբ կայացվել են վարչական իրավախախտումներով պայմանավորված վճիռներ, մարդ	163
հանցագործության դեպքերի քանակը տարվա ընթացքում	41	X	X



Սոթք Արտավագդիկ եկեղեցին Բյուրական գյուղում



Եկեղեցի Օշական գյուղում



Վամուրց Բասախ գետի վրա